սուսի Քրիստոսի. զոր ամենակարող Փրկիչն աշխարհացն՝ փրկեսցէ ի չար հերձուածողաց և ի չարաբարոյ թշնամեացն. և յիշատակ անջնջելի պահեսցէ մինչեւ ի կատարած աշխարհի, և Պր. Հրիհորին և իւր ամենայն արեան մերձաւորացն. և զիւր պարկեշտ տիկնոջն Աղիզքոին զհոգին և զիւրայնոցն ամէնին՝ արժանաւորեսցէ յերկնային խորանին, անմահական սեղանին, և լուսեղէն պատմուճանին և անթառամ պսակին. լսել տայ զերանաւէտ ձայնն, եթէ, Եկայք օրհնեալք Հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալն ի սկզբանէ աշխարհի. ամէն։ Հայր մեր որ յերկինս։ — Եւ ինքն վաղճանեցաւ Թվ. ՌԺԴ Պր. Հրիհորն։

1566. Թվ. ՌԺԵ. Սեպտ. ամսոյ ԻԵ. Խոնդիքարն Թուրքին մեռաւ ի մէջ զօրացն իւրոց, զոր էր գնացեալ ի վերայ քրիստոնէից, ի վերայ Ֆռանգաց աշխարհին, ի վերայ հռչակելի և անուանի մեծ և ամուր քաղաքի՝ որ կոչեն Վիատնեայ (Վիտին), և Թուրքի լեզուով Պէչ. և զի երկու անկամ գնացել էր և ոչինչ կարաց առնել, այս երրորդում էր գնացեր. և այնպէս ուխտ եդեալ էր, զի կամ զքաղաքն առցէ և կամ մեռցի. զոր իսկ կատարեցաւ իւր խոստումն, որպէս ի բերանոյ իւրմէ բխեց։ Եւ էր Թագաւորութիւն նորա որչափ Թագաւորեաց՝ 47 ամ, և փոխանակ նորա նստաւ որդին սուլտան Սէլիմ անուն։

1567. Թվ. ՌԺԶ. Հոկտ. 1. Թագարն եկաւ ի Ռուսաց աշխարհն, ի կողմանն Խմելնիքին, և էին հազար հոգի անօրէնք. և Ֆռանգ ազգն որ կոչին Իլախ՝ էին և նոքա արք իբրեւ 600. և էր գլխաւոր նոցա Աղրուս, որ էր սդարոսդայ Խմելնիքն. և էր ընդ նմա այլ իշխանք իւրեանց գնդաւն. ընդ որս էր Օլեքսանդր Խօրուժիին վոյվոտային եղբայր, և այլքն հարիւրապետք։ Եւ իբրեւ դիմեցին ի վերայ Դաթարին, կոտորեցին ի նոցանէ իբրեւ արք 600, զքաջ և զօրեղ զմարդիքն. յետոյ մնացեալքն ի անօրինացն կրկին քաջալերեցան և դարանակալեցան, և դիմեցին ի վերայ Ֆռանգաց. և նոքա ցրուեալք էին և ոչ էին ի միում տեղոջ. և ընկան փախստական. և անօրէնք Դաթարն յետս նոցա չոգան և հասին Աղրուսին, որ էր գլուխ զօրացն, և սպանին, և զայլսն ընդ նոսա քաջ և արի մարդիքն, և գերեցին 80 հոգի կենդանի, և զայլս փախստական արարին, և ինքեանք ելին և գնացին ի երկրէն։

1568. Հայոց Թվ. ՌԺԶ. Դեկտ. Ի, Այլազգեաց Ցննդեան ժամանակն։ Եկաւ Դադարն, և բազում զօրքն, զոր ոմանք ասէին եթէ 40,000, և եմուտ ի գաւառն Բոտոլեային, և զամենայն գաւառն և քաղաքն և զգիւղն ուաւրեց եւ գերի տարաւ, և զամենայն բարութիւն, զոչխար և զարջառն և զամենայն հացն և ստացուածն հրկիզ արար։ Եւ զի երկու շաբաթ չրջեցան անօրէնքն ի երկիրս այս, և ոչ ոք ի նոցանէ կորեաւ. քանզի մեր իշխանքն և մեծամեծքն թուլասիրտ են դարձել և ձեռքն լքեալ և ծունկքն կթոցեալք, մանաւանդ յուտել և ի ըմպել և արբենալ, և զմիմեանս սպանանել և զազ-